ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 48-Լ «11» 10 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 21-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թ հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի՝

1) Ստեղծել նոր բաժիններ՝

ա. լիցենզավորման և թույլտվությունների բաժին,

բ. լիցենզավորման և պետական փաստաթղթերի դիտարկումների և վերլուծության բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

լիցենզավորման գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին» N 21-Լ հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

10/11/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի .... -ի N ..... հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լիցենզավորման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության կազմում գործող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակն է կրթության ոլորտում լիցենզավորման գործընթացի իրականացումը:

8. Վարչության խնդիրներն են՝

1) կրթության բնագավառում գործունեության միասնական քաղաքականության և լիցենզավորման միատեսակ պարտադիր պայմանների և պահանջների ապահովումը,

2) լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների պահպանումը, հրապարակայնությունը, գործընթացի պարզեցումը, օրինականության և թափանցիկության ապահովումը,

3) ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթներն՝ ըստ բաժինների.

9.1. Լիցենզավորման և թույլտվությունների բաժինը՝

1) ապահովում է իրավաբանական անձանց լիցենզիա տրամադրելու (մերժելու), լիցենզիան վերաձևակերպելու, այլ վայրում ևս գործունեություն իրականացնելու, լիցենզիայի կրկնօրինակ տրամադրելու գործառույթների իրականացումը,

2) ապահովում է լիցենզավորված անձանց կողմից սովորողների սահմանային տեղերի փոփոխության, նախադպրոցական տարիքային խմբերով և մասնագիտությունների գծով գործունեության թույլտվության գործառույթների իրականացումը,

3) ապահովում է լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը, անհրաժեշտության դեպքում՝ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու նպատակով տեղում ուսումնասիրության իրականացումը,

4) վարում է ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանը՝ կրթական ծրագրերի իրականացման համար տրված լիցենզիաների մասով, և ապահովում է յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար անհատական գործի կազմումը,

5) իրականացնում է կրթության ոլորտի լիցենզավորման գործընթացի փաստաթղթաշրջանառությունը,

6) իրականացնում է կրթության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի գործավարությունը, հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը, ամփոփումը և դրանք ներկայացնում է «Կրթական ծրագրերի իրականացման հանձնաժողով»-ի քննարկմանը,

7) հավաքագրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունները,

8) նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ ինչպես նաև այլ փաստաթղթեր, մշակում է դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր,

9) իրականացնում է կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների, դիմումների, դիմում-բողոքների պատասխանների կազմման, ուսումնասիրության աշխատանքներ, կատարում վերլուծություններ և դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություններ,

10) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

9.2. Լիցենզավորման և պետական փաստաթղթերի դիտարկումների ու վերլուծության բաժինը՝

1) իրականացնում է լիցենզիաների գործողության կասեցման և դադարեցման գործառույթներ, ապահովում է դրանց հետ կապված լիցենզավորման հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը և ներկայացնում քննարկման,

2) հավաքագրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտների ներկայացրած լիցենզավորման հաշվետվությունները ինչպես նաև ապահովում է ստացված տեղեկատվության վերլուծությունը և գնահատումը,

3) իրականացնում է ոլորտին առնչվող պետական տուրքի վճարման պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն,

4) ներկայացնում է առաջարկություններ լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների փոփոխման և արդիականացման վերաբերյալ,

5) իրականացնում է պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների /բարձրագույն, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական/ պետական նմուշի ավարտական փաստաթղթերի /դիպլոմ/ հայտավորման, պատվիրման, բաշխման, ստացված հաշվետվությունների հավաքագրման և արխիվացման աշխատանքների համակարգումը,

6) իրականացնում է կորցրած և խոտանված ավարտական փաստաթղթերի հիմքերի ուսումնասիրման և կրկնօրինակների տրամադրման, ավարտական փաստաթղթերի իսկությունների հաստատման գործընթացը,

7) նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ ինչպես նաև այլ փաստաթղթեր, մշակում է դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր,

8) իրականացնում է կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների, դիմումների, դիմում-բողոքների պատասխանների կազմման, ուսումնասիրության աշխատանքներ, կատարում վերլուծություններ և դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություններ,

9) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

13. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

14. Վարչության պետը, բաժինների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

15. Վարչության պետի, բաժինների պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

16. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

16.1. Լիցենզավորման և թույլտվությունների բաժին,

16.2. Լիցենզավորման և պետական փաստաթղթերի դիտարկումների ու վերլուծության բաժին: